ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հոկտեմբերի շաբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

140
(2806)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՈ՞Ւ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՏՈՒՆ ՉԵՆ ԳՆՈՒՄ. ԹՎԵՐ

Հունվարի 1-ից Արցախի Հանրապետությունն այլեւս գոյություն չի ունենա, իսկ արցախցիները պաշտոնապես կդառնան ՀՀ քաղաքացիներ: Մինչ այս Արցախը պաշտոնապես լքել է 100 625 անձ, որոնցից 29 հազարը երեխաներ են:

Պետությունը որոշել է միանվագ 100 հազար դրամ հատկացնել արցախցիներին. այդ գումարների մի մասը երեկ փոխանցվել է 50 հազար արցախցու: Միանվագ 100 հազար դրամն արցախցիներից շատերը դժվարանում են ծախսել, քանի որ այդ գումարով ո՛չ կարող են տան վարձավճարը մարել, ո՛չ սնունդ գնել մինչեւ այն պահը, երբ կգտնեն աշխատատեղեր կայուն եկամուտ ունենալու համար:

Հայաստանի Հանրապետությունն այս 30 տարիների ընթացքում՝ ամեն տարի, Արցախի կարիքների համար միլիոնավոր գումարներ է փոխանցել պետբյուջե: Տարեվերջին քննարկվում էր գումարի չափը, տարեսկզբին փոխանցվում էր Արցախ:

2023 թվականին նախատեսված էր Արցախին փոխանցել 144 մլրդ ՀՀ դրամ: Այս մասին ԱԺ-ում 2023 թ. պետական բյուջեի քննարկման ժամանակ հայտարարել էր էկոնոմիկայի նախկին նախարար Տիգրան Խաչատրյանը:

Եթե այս թվին՝ 144 մլդ դրամին, գումարենք նաեւ Ճապոնիայի կողմից արցախահայերին տրամադրված 2 միլոն դոլարը, որը համարժեք է 820 մլն դրամի, ավելացնենք ԱՄՆ-ի կողմից տրամադրված 11 մլն դոլարը, որը համարժեք է 4 մլդ 716 մլն դրամի, նաեւ Եվրահանձնաժողովի կողմից փոխանցված 10.4 մլն եվրոյին համարժեք 4 մլդ 506 մլն դրամը, Լատվիայի կողմից հատկացված 350 հազար եվրոյին համարժեք 151 մլն դրամը, Շվեյցարիայի կողմից տրամադրված 1,5 մլն ֆրանկին համարժեք 675 մլն դրամը, Կանադայի կողմից տրամադրված 2,5 մլն դոլարին համարժեք 1 մլդ 25 մլն դրամը, կստացվի 155 մլդ 893 մլն դրամ:

Հայաստանի ցանկացած մարզում նորմալ պայմաններով տուն կամ բնակարան գնելու համար միջինում անհրաժեշտ է 50 հազար դոլար:

Առանց Հայաստանի բյուջեի հավելյալ ծախսի, եթե ստացված գումարը բաժանեն 50 հազար դոլարի համարժեք դրամի, այսինքն՝ 20 մլն դրամի, կստացվի 7 հազար 794:

Այսինքն՝ արցախահայերի համար Հայաստան եկած գումարների եւ բյուջեի կանխատեսվող փոխանցումների արդյունքում Արցախից բռնի տեղահանված քաղաքացիների համար կարող ենք գնել 7794 հատ տուն կամ բնակարան:

Հայաստանը, ունենալով 11 մլդ արտաքին պարտք, կարող է նույնիսկ հատկացում չանել արցախահայերին բնակարանով ապահովելու համար, քանի որ այդքան բնակարանը կբավականացնի 100 հազար արցախցիներին՝ ըստ ընտանիքների:

Եթե այս միլիոններից հետո յուրաքանչյուր արցախցի ընտանիք Հայաստանում չունենա սեփական տուն կամ բնակարան, կարող ենք ասել, որ իշխանությունները, «պոզով պոչով կոռուպցիա» ասելով, հենց իրենց էլ նկատի ունեն:

Արդարադատության փոխնախարար Լեւոն Բալյանը պաշտոնի նշանակվել է 2022 թվականի դեկտեմբերի 30-ին: Բալյանը հայտարարագրել է 4 անշարժ գույք համատեղ սեփականությամբ՝ 1 ավտոտնակ, 1 բնակարան բազմաբնակարան շենքում, 1 հասարակական նշանակության շինություն Արաբկիր վարչական շրջանում, բաժնային սեփականությամբ անհատական բնակելի տուն Կենտրոն վարչական շրջանում: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 4 մլն 500 հազար դրամ, իսկ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 13 մլն 194 հազար դրամ, որից 11 մլն 87 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից, իսկ 2 մլն 106 հազար դրամը կենսաթոշակ է ՀՀ ԱՆ ՀՀ ՀԿԱԾ-ից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 30 մլն 305 հազար դրամ, որից 15 մլն 900 հազարը առաջին բնակարանի հիփոթեքն է, իսկ 14 մլն 174 հազար դրամը՝երկրորդ բնակարանինը: Հիշեցնենք նաեւ, որ վերջերս՝Ազգային ժողովի լիագումար նիստի ընթացքում, Բալյանը ներկայացրել է ««Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, ըստ որի՝դատավորների աշխատանքի վարձատրության համար 60 տոկոս հավելում կսահմանվի: Սա՝ այն դեպքում, երբ դատական համակարգում աշխատող Բալյանի պես պաշտոնյաները նվազագույնը ունեն հիփոթեքով բնակարան: Ինչ միջոցներով է նա ձեռք բերել ունեցվաքը, թերեւս կպարզեն համապատասխան կառույցները:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ուժային կառույցներում այս օրերին ակտիվ քննարկվում են Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության դեմ իրականացվող գործողությունները: Տեղեկացանք, որ ուժային կառույցների ղեկավար կազմը ներքին խոսակցությունների ժամանակ եկել է այն եզրահանգման, որ որքան էլ ջանքեր, գործիքակազմ կիրառեն ու այս կամ այն միջազգային կառույցներ դիմեն, միեւնույնն է, Ադրբեջանի կողմից ձերբակալված ու կալանավորված Արցախի երեք նախագահների՝Բակո Սահակյանի, Արկադի Ղուկասյանի, Արայիկ Հարությունյանի, Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանի, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանի, Արցախի արտաքին գործերի նախկին նախարար Դավիթ Բաբայանի վերադարձի հարցը քաղաքական է, ու միայն քաղաքական համապատասխան որոշումով կլինի նրանց վերադարձը Հայաստան: Դա, թերեւս, ուժայինների գործը չէ: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 27-ից սկսած՝Ադրբեջանի դատախազը հետեւողական ջանքերով Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության նկատմամբ մեղադրանքներ է առաջադրում, հետախուզում եւ կալանավորում: Քաղաքական բարձրագույն ղեկավարը միայն աչքի է ընկնում կյանքը վայելելու կադրերով: Նիկոլ Փաշինյանը դստեր հետ ընթրիքի է մասնակցում՝ չպահանջելով մեր հայրենակից բոլոր գերիների վերադարձի հարցով քաղաքական ճնշումներ բանեցնել:

ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործով դատական նիստը վերջապես հոտեմբերի 3-ին կայացել է, սակայն գործով տուժող՝ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը դատարան չի գնացել, ու նիստը կայացել է առանց տուժողի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ դատական նիստը կողմերի համաձայնությամբ առանց տուժողի շարունակվել է, քանի որ ներկա է եղել նրա ներկայացուցիչը, սակայն այստեղ հարցը ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանի վերաբերմունքն է դատական համակարգի նկատմամբ: Այսպես իրավաբան հանձնաժողովի նախագահն իր վերաբերմունքն արտահայտում է երրորդ իշխանության՝իրավաբանության նկատմամբ: Դատական համակարգում դժգոհ են, թե իշխանական երեսփոխանը վեր է դասում իրեն եւ դատարան չի ներկայանում: Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝այս գործով դատական նիստերը չէին կայանում, քանի որ պաշտպաններն առաջին նիստի օրը չէին ներկայացել դատարան՝նշելով, որ աշխատանքային ծանրաբեռնվածություն ունեն: Արդյունքում Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Տիգրան Ոսկանյանը հերթական նիստն էր նշանակել հունիսի 26-ին, բայց էլի նիստը չէր կայացել: Նկատենք, որ չնայած դատապաշտպանները չէին ներկայանում, բայց մեղադրյալ պատգամավոր Միհր Սահակյանը բոլոր նշանակված նիստերին անձամբ նրկայացել էր դատարան: Հիշեցնենք, որ ս.թ. մարտի 31-ին Միհր Սահակյանը Պետահիրավական հարցերով մշտական հանձնաժողովի նիստում վիճաբանել էր Վլադիմիր Վարդանյանի հետ, երբ նա պարծեցել էր, թե՝ոնց ուզեմ, կխոսեմ, ապա բռունցքով հարվածել էր ՔՊ պատգամավորի ձախ հոնքին:

ԶՐՈՒՅՑ

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայաստանի խորհրդարանը հոկտեմբերի 3-ին ընդունեց Հռոմի կանոնադրության վավերացման նախագիծը՝ Հռոմի ստատուտը:

Ընդգծենք, որ այն ընդունվել է միայն իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քվեարկության արդյունքում:

ՔՊ-ական պատգամավորները 60 կողմ ձայներով վավերացրրին Հռոմի ստատուտը: Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» ֆրակցիաները դեմ քվեարկեցին դրան՝ հայտարարելով, որ այն հակասահմանադրական է եւ նորանոր աղետներ է բերելու Հայաստանի համար, ընդդիմադիր պատգամավորներից մի քանիսն էլ չէին մասնակցել քվեարկությանը: Հիշեցնենք, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի խոսնակ Դմիտրի Պեսկովն ասել էր, որ Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացումն իրենք կդիտարկեն որպես ծայրահեղ թշնամական վերաբերմունք:

«Ժողովուրդ» օրաթերթը Հռոմի ստատուտի հնարավոր հետեւանքների մասին զրուցել է քաղաքագետ Արա Պողոսյանի հետ:

-Պարոն Պողոսյան, Հռոմի ստատուտի վավերացումը քաղաքական ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ Հայաստանի համար:

-Քաղաքական հետեւանքներ մենք, ըստ էության, արդեն տեսնում ենք: Նախ՝ Ռուսաստանում եւ փորձագիտական եւ քաղաքագիտական դաշտերում բավական ակտիվ եւ բուռն քննարկումներ, մեղադրանքներ կան Հայաստանի Հանրապետության ու հայաստանյան իշխանության նկատմամբ: Նաեւ քաղաքական գործիչներ են արդեն արտահայտվում այս թեմայով, որոնք հատկապես իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչներ են: Սա ենթադրում է, որ Հռոմի ստատուտի վավերացումը լուրջ խնդիրներ է առաջացնելու, բայց պետք է նկատի ունենալ, որ սա բուն պատճառը չէ: Սա հետեւանքն է նախկին հարաբերությունների որակի, զարգացման տեմպերի՝ ռեգրեսի իմաստով, եւ սա Ռուսաստանի Դաշնության կողմից պարզապես արձագանք է հանրապետության արտաքին քաղաքականության շրջադարձային հարաբերությունների նկատմամբ:

Ըստ էության, ակնհայտ է, որ նաեւ Հայաստանի իշխանություններն են առաջարկել, որ Հռոմի ստատուտի մասով Ռուսաստանի Դաշնության հետ, եթե չեմ սխալվում, երկկողմ պայմանագիր կնքվի, որը ազդեցություն չի թողնի Ռուսաստանի Դաշնության, մասնավորապես՝ նախագահի այցելությունների վրա: Սակայն այստեղ կարեւոր կետերից է նաեւ այն, որ Հռոմի ստատուտի վավերացումը ընկալվում է որպես շրջադրաձ դեպի Արեւմուտք եւ ռուսական պայմանական օրբիտայից Հայաստանի դուրս գալու գործընթացի սկիզբ: Հետեւաբար Ռուսաստանի Դաշնության արձագանքն ու հետեւանքները, որոնք այս պահին որոշակի իմաստով կան, ապագայում կարող են խորանալ:

Հռոմի ստատուտն այն առիթն է, որը ռուսական կողմը կարող է օգտագործել իր խուսույթում՝ նշելով, որ հայկական կողմը ոչ բարեկամական դրեւորեց իրեն:

Զրուցեց ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔՊ–Ի ԿԱՋՄԸ՝ ԱՎԱԳԱՆԻՈՒՄ

ԿԸՀ-ն ամփոփել էր սեպտեմբերի 17-ին կայացած Երեւանի ավագանու ընտրությունների վերջնական արդյունքները:

Ըստ այդմ՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է 32.57 տոկոս քվե, այսինքն՝ ավագանիում կունենա 24 մանդատ:

Այսպիսով, նորընտիր ավագանիում իշխող ուժը ներկայացված կլինի հետեւյալ կազմով. քաղաքապետի թեկնածուն Տիգրան Ավինյանն է, որը ընտրությունների արդյունքով այդպես էլ չընտրվեց: Նրան հաջորդում է ԱԻ նախկին նախարար Արմեն Փամբուխչյանը, որը ընտրությունների ժամանակ նաեւ ղեկավարում էր ՔՊ նախընտրական շտաբը:

Ավագանու անդամ Նուարդ Վարդանյանը ներկայացված կլինի նաեւ նորընտիր ավագանիում. վերջինս ՔՊ խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանի քույրն է:

Ավագանու կազմում կլինի Լեւոն Հովհաննիսյանը, որն այժմ քաղաքապետի ժամանակավոր պաշտոնակատարն է, նրան հաջորդում են փոխքաղաքապետ Սուրեն Գրիգորյանը եւ ավագանու «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Արմեն Գալշյանը:

Նորընտիր ավագանին խոստանում է նաեւ «մշակութային» լինել. ավագանու կազմում կլինեն երգիչ, կոմպոզիտոր Արթուր Իսպիրյանը եւ դերասանուհի Տաթեւ Հովակիմյանը:

ԱԺ-ից ավագանի է գործուղվել նաեւ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի օգնական Նատալյա Սինորյանը, «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի տնօրեն Ռուզաննա Երեմյանը եւ Անտառային կոմիտեի նախագահ Վլադիմիր Կիրակոսյանը:

«Իմ քայլը» խմբակցության անդամներ Մարատ Թոխյանը, Հայկ Միրզոյանը, Դիանա Քերոբյանը, Էդուարդ Ավետիսյանը, Արման Հարությունյանը, Լեւոն Ջաքարյանը, Արման Բաբաջանյանը, Ջարուհի Աղաջանյանը, Արման Հարությունյանը եւ Լուսինե Գեւորգյանը կշարունակեն պահպանել ավագանու անդամի իրենց մանդատները. նրանք ներկայացված կլինեն նաեւ նոր ավագանիում:

Նորընտիր ավագանիում մանդատ կունենա նաեւ Նարեկ Մանուկյանը, Արամ Ազատյանը, Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը:

ՔՊ նախընտրական ցուցակում ընդգրկված 3 անդամներ՝ Մարգարիտ Խաչատրյանը, «Կատուներ» ավանգարդ-ջազ-ռոք խմբի հիմնադիր, երաժիշտ Վահագն Հայրապետյանը եւ Ռուզաննա Երամյանը, ինքնաբացարկի դիմում են ներկայացրել: Նրանց մանդատը կանցնի ցուցակի հաջորդ համարներին՝ Հակոբ Բալայանին, Արման Բարխուդարյանին եւ Կիմա Աբրահամյանին:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ԱՆՀԱՅՏ ՕՐԱԿԱՐԳՈՎ

Հայաստանի խորհրդարանական պատվիրակությունը հոկտեմբերի 14-19 աշխատանքային այցով կգործուղվի Բեռլին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատվիրակության կազմում լինելու են Հայաստան-Գերմանիա բարեկամական խմբի ղեկավար, ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, ԱԺ պատգամավորներ Շիրակ Թորոսյանը, Լիլիթ Կիրակոսյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, Միքայել Թումանյանը:

Թե ՔՊ-ականներն ինչ օրակարգով են մեկնում Գերմանիա, ինչ հանդիպումներ են այնտեղ ունենալու, հայտնի չէ. ԱԺ համապատասխան որոշման մեջ այդ մասին ոչինչ կա:

Պատգամավորների գործուղման հետ կապված ծախսերը՝ ճանապարհածախսը (Վ. Վարդանյանի, Հ. Գրիգորյանի եւ Ժ. Հարությունյանի՝ Բեռլին-Երեւան), օրապահիկը (Վ. Վարդանյանի, Հ. Գրիգորյանի, Ժ. Հարությունյանին՝ հոկտեմբերի 15-19-ը), ինչպես նաեւ գիշերավարձը կկատարվեն պետբյուջեի հաշվին:

Ո՞Վ ՀԱՆՁՆԵՑ ԱՐՑԱԽԸ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը համաձայն չէ այն պնդումներին, թե Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին իշխանության է բերել ինչ-որ մեկը Ղարաբաղը հանձնելու նպատակով: «Վալդայ» ակումբի հանդիպման ժամանակ, պատասխանելով «RadioSputnik» կայքի գլխավոր խմբագիր Մարգարիտա Սիմոնյանի հարցին, ՌԴ նախագահը նշել է, որ Փաշինյանի՝ իշխանության գալը հայ ժողովրդի ընտրությունն է: Նա հիշեց, թե ինչպես էր Փաշինյանն իշխանության գալուց հետո նույնիսկ սկզբնական շրջանում ասում, որ Ղարաբաղը Հայաստանի մաս է:

«Ես հիմա չեմ ասում՝ ճիշտ էին որոշումները, թե սխալ: Դա իմ տեղը չէ դատելու համար, բայց կարծում եմ, որ անարդար է ասել, որ նա միտումնավոր հանձնեց Ղարաբաղը», - հավելել է Պուտինը:

Վլադիմիր Պուտինը համեմատաբար ավելի մեղմ է արտահայտվել, քան ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան: Պուտինը պնդել է, որ Հայաստանը երբեք չի ճանաչել Ղարաբաղը, իսկ նրա վարչապետ Նիկոլ Փաշինյանը Արեւմուտքի հետ բանակցություններում, այնուհետեւ՝ 2023 թվականի մայիսին Երեւանում կայացած մամուլի ասուլիսին, հայտարարել է, որ Ղարաբաղը Ադրբեջանի տարածքի մաս է:

ՌԴ ԱԳՆ նախարար Սերգեյ Լավրովը նույնպես իր ելույթներում պնդել է՝ այն որոշումը, որ Ղարաբաղը պետք է դառնա Ադրբեջանի մաս, կայացվել է Նիկոլ Փաշինյանի մասնակցությամբ:

ՌԴ նախագահ Վալդիմիր Պուտինի կարծիքը չի համընկնում ո՛չ Սերգեյ Լավրովի, ո՛չ էլ Մարիա Զախարովայի կարծիքի հետ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Գրանադայում հոկտեմբերի 5-ին, հնգակողմ հանդիպման փոխարեն, կայացել է քառակողմ հանդիպում՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ:

Հիշեցնենք նաեւ, որ նախօրեին Ալիեւը հրաժարվել էր հանդիպմանը ներկա գտնվել. այցի չեղարկման պատճառը դարձել է Ֆրանսիայի նախագահի մասնակցությունը եւ Թուրքիայի նախագահի մասնակցության մերժումը:

Հանդիպման արդյունքում ընդունվել է հայտարարություն, որում, մասնավորապես, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցածը բնորոշվում է զանգվածային տեղահանություն: Եվրոպական խորհրդի նախագահը, Ֆրանսիայի նախագահը եւ Գերմանիայի կանցլերն ընդգծում են իրենց անսասան աջակցությունը Հայաստանի անկախությանը, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը եւ սահմանների անձեռնմխելիությանը եւ աջակցություն են հայտնում «ԵՄ-Հայաստան հարաբերությունների ամրապնդմանը՝ իր բոլոր չափումներով՝ հիմնված Հայաստանի Հանրապետության կարիքների վրա:

Ադրբեջանի նախագահի հատուկ ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկովը ֆրանսիական FranceInter ռադիոկայանին տված հարցազրույցում ասել է. «Ադրբեջանի վստահությունը Ֆրանսիայի նկատմամբ՝ որպես նույնիսկ պոտենցիալ միջնորդ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացում, այսօր զրոյական է»: Նա նաեւ Ֆրանսիային համարել է անխոհեմ եւ նշել, որ Ֆրանսիան տարածաշրջանը տանում է դեպի ռազմական առճակատման նոր վտանգավոր գիծ:

Գրանադայում տեղի ունեցած հանդիպումից հետո լուրեր տարածվեցին, որ Նիկոլ Փաշինյանը հանձնել է ադրբեջանական անկլավները, որի մեջ մտնում են Տավուշի մարզի մի քանի գյուղեր, Տիգրանաշենը, փոխարենը չի ստացել Արծվաշենը, համաձայնել է «Զանգեզուրի միջանցքի» հետ:

Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը ավելի ուշ հերքեց այս լուրերը՝ ասելով. «ՖԵՅՔԱՋԵՐԾՈՒՄ. Գրանադայում վարչապետը հանձնել է անկլավներն ու միջանցքը: Հայաստանը Գրանադայում ինչ ցանկացել է, ստացել է՝ հասնելով լուրջ հաղթանակի: Անկլավների թեմա չի քննարկվել, միջանցքի թեման փակ է: Չվախենաք»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ՝ ԿՌՎԱԽՆՁՈՐ

Հոկտեմբերի 10-ին կայանալիք Երեւանի ավագանու նիստում ավագանու անդամները բաց քվեարկությամբ նոր քաղաքապետ կընտրեն: Հոկտեմբերի 5-ին արտահերթ նիստով ավագանին մի շարք հստակեցումներ է արել քաղաքապետի ընտրության ընթացակարգում:

Իսկ ի՞նչ են այս փոփոխությունները ենթադրում: Այսպիսով, հոկտեմբերի 10-ին սպասվող քաղաքապետի ընտրության ժամանակ յուրաքանչյուր քվեաթերթիկի վրա պետք է գրվի նաեւ ավագանու անդամի անունը: Քվերակության արդյունքներից հետո արդեն քաղաքապետարանում կիրապարակվեն վերջնական արդյունքները, թե ավագանու որ անդամը որ թեկնածուի օգտին է քվեարկել: Թե սա ինչպես է անդրադառնալու ընտրության վերջնարդյունքի վրա, դժվար է ասել, բայց այս փոփոխությունը հստակ ցույց է տալիս իշխանության անհանգստությունները եւ վախերը:

Թեեւ դեռ ավագանու ընտրությունների անցողիկ շեմը հաղթահարած ուժերն իրենց վերջնական որոշման մասին չեն հայտարարել, բայց, կարծես, ջրերն արդեն պարզվում են: Քաղաքական ուժերի հայտարարություններից պարզ է դառնում, որ հոկտեմբերի 10-ին սպասվող ավագանու նիստը, ամեն դեպքում, կկայանա, քանի որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, իշխանությանը հաջողվել է «Հանրային ձայն» կուսակցության հետ համաձայնության գալ, ապահովել 1 ձայն, որպեսզի այդ օրը քվորում ապահովեն: Եթե նիստը կայանում է, եւ որպես քաղաքապետ առաջադրվում է միայն 1 թեկնածու, այս դեպքում՝ Տիգրան Ավինյանը, ապա նրա՝ քաղաքապետ ընտրվելու համար բավարար կլինի ընդամենը 27 ձայն, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունները միասին ունեն 32 ձայն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» եւ «Հանրապետություն» կուսակցությունների միջեւ առկա է ներքին համաձայնություն, որ Արամ Սարգսյանի թիմակիցները գան ու կողմ քվեարկեն Տիգրան Ավինյանի թեկնածությանը, դրա փոխարեն՝ «Հանրապետություն» կուսակցությանը կհատկացվի փոխքաղաքապետի պաշտոնը:

Ակնհայտ է, որ քվեաթերթիկի վրա ավագանու անդամների անուն գրելը իշխանության պահանջն է:

Այսպիսով նրանք, հավանաբար, մտադիր են վերահսկել առաջին հերթին իրենց թիմակիցների, ինչպես նաեւ ավագանու մյուս անդամների քվեարկությունը, որպեսզի հանկարծ ներքին կարգով ձեռք բերված այս պայմանավորվածությունները չխախտվեն: Գաղտնիք չէ, որ իշխանականների ներսում էլ «գզվռտոց» է գնում, քանի որ Տիգրան Ավինյանի թեկնածությունը ոչ միանշանակ է ընդունվել անգամ ՔՊ-ում:

Այսինքն՝ իշխանությունները վտանգ են զգում ոչ միայն ընդդիմադիր շրջանակներից, այլ նաեւ հենց իրենց թիմակիցներից, ուստի որոշել են այնպես անել, որ ավագանու անդամները քվեաթերթիկի վրա գրեն իրենց անունները, որպեսզի, եթե իրենց թեկնածուն չանցնի, ապա իմանան, թե ում հետ հաշիվներ պետք է պարզեն:

Հավելենք, որ քվեարկություն վերահսկելը ՔՊ-ում արդեն ավանդույթ է դարձել. խորհրդարանում էլ քվեարկություններից հետո ՔՊ-ականները նկարում են իրենց քվեաթերթիկները, որպեսզի ներկայացնեն ղեկավարությանը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՍՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑԵԼԵՑ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ադրբեջանի օմբուդսմենն այցելել է Ռուբեն Վարդանյանին:

«Սպուտնիկ Ադրբեջանի» փոխանցմամբ՝ Վարդանյանը գոհունակություն է հայտնել պահման պայմաններից: Նա հայտնել է նաեւ, որ նախնական բուժզննում է անցել, առողջական խնդիրներ չունի:

Ռուբեն Վարդանյանը կկարողանա հեռախոսով շփվել ընտանիքի հետ: Նրան տրամադրվել է փաստաբան:

ՏԵՂԱՎՈՐՎԵԼ ԵՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՆԵՐՈՒՄ

«Կրթության որակի անկում չունենք: ԼՂ-ից բռնի տեղահանված երեխաների 38 տոկոսը՝ շուրջ 7904 երեխա, ընդգրկվել է տարբեր կրթական հաստատություններում»,- ճեպազրույցի ժամանակ ասաց ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

Ըստ մարզերի՝ բաշխվածությունն ունի հետեւյալ պատկերը՝ Սյունիքում՝ 320, Վայոց ձորում՝ 152, Գեղարքունիքում՝ 367, Արարատում՝ 1221, Կոտայքում՝ 1348, Արագածոտնում՝ 371, Արմավիրում՝ 671, Լոռիում՝ 404, Շիրակում՝ 282, Տավուշում՝ 222, Երեւանում՝ 2543:

ՆԱԽԱՐԱՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

Մեկնարկել է Իրանի ճանապարհների եւ քաղաքաշինության նախարար Մեհրդադ Բազպաշի այցն Ադրբեջան:

Ինչպես հաղորդում են ադրբեջանական լրատվամիջոցները, իրանցի նախարարին Կովսականի (Զանգիլանի) օդանավակայանում դիմավորել է Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւը:

Մեհրդադ Բազրպաշը ծանոթացել է Զանգիլանի օդանավակայանում ստեղծված պայմաններին: Այցի շրջանակներում նախատեսվում է նաեւ այցելություն Ադբանդայի մայրուղու վրա գտնվող կամուրջ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ նոր ծրագրեր՝ կապված ճանապարհների կառուցման ընթացքի հետ:

ՀԱՅՏՆԻ Է ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐԸ

Հաագայում ՄԱԿ-ի միջազգային դատարանը Լեռնային Ղարաբաղում ստեղծված իրավիճակի հարցով Ադրբեջանի դեմ ներկայացված հայցի վերաբերյալ լսումների օր է նշանակել հոկտեմբերի 12-ը:

Այս մասին ասվում է դատարանի հայտարարության մեջ:

«Միջազգային դատարանը՝ ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմինը, հինգշաբթի՝ 2023 թվականի հոկտեմբերի 12-ին, կանցկացնի «Ռասսայական խտրականության բոլոր ձեւերի վերացման միջազգային կոնվենցիայի» (Հայաստանը՝ ընդդեմ Ադրբեջանի) կիրառման գործով հանրային լսումներ»,- ասված է հրապարակված հայտարարության մեջ:

ՉԱՐԱԾԱՀՈՒՄ

ՄԵԾ ՉԱՓԵՐԻ ԿԱՇԱՌՔ՝ ԵՊՀ-ՈՒՄ

Հայկ Սարգսյանը, 2000 թվականից զբաղեցնելով Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնը, հանդիսանալով պետության կողմից ստեղծված հիմնադրամի անունից իրավունք, պարտականություն եւ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ, նույն ֆակուլտետի Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, նույն հիմքով պաշտոնատար անձ հանդիսացող Գագիկ Պետրոսի Տոնոյանի հետ խմբի կազմում, իրենց ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ֆակուլտետի չորրորդ կուրսի ուսանող Սերգեյ Սամվելի Քեյանի օգտին ապօրինի գործողություն կատարելու դիմաց վերջինիցս պահանջել եւ ստացել են մաքուր չափերով՝ ընդհանուր 480.000 ՀՀ դրամ կաշառք:

Հայկ Սարգսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, Երեւանի պետական համալսարանի տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, տնտեսագիտության եւ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի դոցենտ, պաշտոնատար անձ հանդիսացող Արմեն Ռովելի Ներսիսյանի հետ խմբի կազմում, իրենց ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ֆակուլտետի հինգերորդ կուրսի ուսանող Արփի Բյուզանդի Ծառուկյանի օգտին թողտվություն, հովանավորչություն եւ ապօրինի գործողություն կատարելու համար Պետրոս Սայաթի Հովհաննիսյանից Հայկ Սարգսյանի՝ Երեւանի քաղաքի Աբովյան 52 հասցեում գտնվող աշխատասենյակում 2023 թվականի փետրվարի 17-ին ստացել են 19.000 ՀՀ դրամ արժողությամբ «KREMLIN Award» տեսակի կոնյակ եւ խոշոր չափերով՝ 1.571.560 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար կաշառք:

Այսպես, Պետրոս Հովհաննիսյանը Արփի Բյուզանդի Ծառուկյանի /Ավետիսյան/ օգտին թողտվություն, հովանավորչություն եւ ապօրինի գործողություն կատարելու համար ԵՊՀ տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանին խոշոր չափերով կաշառք տալու դիտավորությամբ 2023 թվականի փետրվարի 17-ին ներկայացել է վերջինիս՝ Երեւանի քաղաքի Աբովյան 52 հասցեում գտնվող աշխատասենյակ եւ իր հետ նախապես որպես կաշառք վերցված, ստվարաթղթե տոպրակում տեղադրված 19.000 ՀՀ դրամ արժողությամբ «KREMLIN Award» տեսակի կոնյակի տուփի մեջ տեղադրել 1.571.560 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլարը: Հիշյալ կոնյակը եւ դրանում տեղադրված գումարը տոպրակով հանձնելով Հայկ Սարգսյանին՝ խնդրել է կոնյակին ուշադիր լինել:

Հայկ Սարգսյանը, Պետրոս Հովհաննիսյանից տեղեկանալով նույն ֆակուլտետի հինգերորդ կուրսի ուսանող Արփի Ծառուկյանի կողմից ծննդաբերելու եւ, նորածնի խնամքով զբաղված լինելու հանգամանքով պայմանավորված, ուսումնական գործընթացի հետ կապված խնդիրներ ունենալու մասին, ստացած կաշառքի դիմաց, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, վերջինիս օգտին թողտվություն, հովանավորչություն եւ ապօրինի գործողություն կատարելն իրագործելու նպատակով հեռախոսազանգի միջոցով իր աշխատասենյակ է հրավիրել դեկանի տեղակալ Արմեն Ներսիսյանին եւ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի լաբորանտ Մանե Ռուբենի Հայրապետյանին, ու նրան եւս կաշառքի դիմաց օգնել են: Գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, եւ գործը դատարանում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 5-ին ուշագրավ դեպք է եղել Գյումրի քաղաքի Թումանյան հասցեում գտնվող ավտովերանորոգման կետում: 23-ամյա երիտասարդն ավտովերանորոգման կետում դանակահարել է 36-ամյա տղամարդուն, որին վերանորոգման կետի աշխատակիցները տեղափոխել են հիվանդանոց: Պարզվել է, որ դանակահարված տղամարդը ավտոփականագործ է, իսկ նրան դանակահարողը՝ մեքենա ներկող: Իսկ ի՞նչն է եղել դանակահարության պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ պարզվել է, որ ավտոփականագործը կոնկրետ ժամկետ է տվել մեքենան վերանորոգելու համար, սակայն նշված ժամկետում մեքենան չի վերանորոգվել, ու սկսվել է վիճաբանություն, ինչից հետո դանակահարություն է տեղի ունեցել: Դանակահարողը դեպքից հետո դիմել է փախուստի: Նրան փնտրում են իրավապահները:

ԳԱԼԵՅԱՆԸ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հորը՝ Գարիկ Գալեյանին, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխել են «Աստղիկ» բժշկական կենտրոն, որտեղ նրան հետազոտել են եւ ասել, որ կրկին հետազոտման անհրաժեշտություն է առկա:

Նշենք, որ սեպտեմբերի 9-ին դատարանը բավարարել էր Գարիկ Գալեյանին կալանավորելու միջնորդությունը:

Վերջինիս փաստաբան Վահան Հովհաննիսյանի պնդմամբ՝ կալանքն անթույլատրելի է, քանի որ Գալեյանն ունի պատժի եւ կալանքի կրմանը խոչընդոտող 3 հիվանդություն: Դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան: Քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ Գալեյանի անձնական խուզարկությամբ վերջինիս մոտ հայտնաբերվել եւ վերցվել է պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ առկա է եղել 3 միանման պոլիէթիլենային փաթեթ՝ համապատասխանաբար 1.59 գրամ, 1.51 գրամ եւ 1.60 գրամ ընդհանուր քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի նմանվող յուրահատուկ հոտով դեղնականաչավուն զանգվածներով:

Ոստիկանության փորձագիտական կենտրոնից ստացված եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերված նյութը հանդիսանում է «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔ՝ ՇԵՆԳԱՎԻԹՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երեկ երեկոյան՝ ժամը 22:00-ի սահմաններում, Շենգավիթ վարչական շրջանի Գարեգին Նժդեհի 9-րդ փողոցի շենքերից մեկում աղմուկ-աղաղակ ու լուրջ վիճաբանություն է եղել, որի ժամանակ 1985 թվականի ծնված տղամարդը դանակահարել է 40-ամյա մի տղամարդու, որը դանակի հարվածից ընկել է գետնին:

Ականատեսներն օգնություն են կանչել, շտապ զանգահարել շտապօգնություն ու տղամարդուն տեղափոխել են հիվանդանոց: Դեպքի վայր շտապած իրավապահները պարզել են, որ վիճաբանած անձինք անծանոթներ են ու վիճել են «թարս նայելու» հարցի շուրջ:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽՈՇՈՐ ՉԱՓԵՐԻ ՀԱՓՇՏԱԿՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կիբեռհանցագործությունների եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարված հանցագործությունների քննության վարչությունում իրականացված հսկայածավալ քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ հանցավոր կազմակերպության՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող անդամները համակարգչային ներգործությամբ 2022թ. մայիսի 17-ից մինչեւ 2023թ. մարտի 29-ն ընկած ժամանակահատվածում list.am կայքում ապրանքի վաճառքի կամ ծառայության մատուցման հայտարարություն տված մոտ 7 տասնյակ քաղաքացուց հափշտակել են առանձնապես խոշոր չափերի՝ 19.038.349 ՀՀ դրամ գումար:

Այնուհետեւ, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը թաքցնելու կամ խեղաթյուրելու նպատակով հանցավոր կազմակերպության անդամները նշված գումարները փոխանցել են տարբեր էլեկտրոնային դրամապանակների եւ բանկային քարտերի, կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող անձանց միջոցով գումարը փոխակերպել են կրիպտոարժույթի՝ փոխանցելով տարբեր էլեկտրոնային դրամապանակների, եւ տնօրինել:

Հանցավոր խմբի երեք անդամների նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, որպես խափանման միջոց նրանց նկատմամբ ընտրվել է կալանավորումը, եւ հայտարարվել է հետախուզում:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԱՆՔԱՎԱՅՐ՝ ՎԱՋԱՇԵՆՈՒՄ

Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին է դիմել« ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, որին է պատկանում Տավուշի մարզի Վազաշենի ոսկի-բազմամետաղային հանքերեւակման տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման ընդերքօգտագործման իրավունքը: Գործող օրենսդրության համաձայն՝ Իջեւան համայնքի Վազաշեն բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված 11-059-0146-0001 ծածկագրով հողամասից 6,924հա մակերեսով տարածքը հատկացվել է ընկերությանը՝ կնքելով հողի սերվիտուտի պայմանագիր՝ մեկ տարի ժամկետով, հետագայում այն երկարաձգելու հնարավորությամբ, օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի թիվ 29 եւ թիվ 31 կետերի պահանջներով՝ 2023թ. սեպտեմբերի 22-ին Իջեւան համայնքի ավագանին որոշել է հավանություն տալ Իջեւան համայնքի Վազաշեն բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված 11-059-0146-0001 ծածկագրով հողամասից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելու համար 6,924հա մակերեսով տարածք «ԷՅԹԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին հատկացնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ երկարաձգելով հողի սերվիտուտի պայմանագիրը մինչեւ 23.03.2024թ., հետագայում այն երկարաձգելու հնարավորությամբ: «Էյթի գրուպ» ՍՊԸ-ն գրանցվել է 2019թ. նոյեմբերին: Հիմնադրել են Տավուշի մարզի Գետահովիտ համայնքում հաշվառված Արմեն Բորիսի Չապուխյանն ու Արաբկիր համայնքում գրանցված Տիգրան Արամի Ավետիսյանը: 2012-2017թթ.-ին Վազաշենի ոսկու հանքավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու թույլտվություն ունեցել է «Պոլիմետ կորպորացիա» հայ-կանադական ՀՁ-ն:

ՔԱՆԴՎԱԾ, ՓՈՍԱՌԱՏ ՃԱՆԱՊԱՐՀ

Տեւական ժամանակ է, ինչ Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի Թեղուտ գյուղի հարավային ծայրին գտնվող կամուրջը հիմնանորոգվում է, այդ պատճառով այն փակ է տրանսպորտային միջոցների երթեւեկության համար: Միջպետական ավտոճանապարհի այդ հատվածը տրանսպորտային միջոցները հարկադրված են անցնել շրջանցիկ ավտոճանապարհով, որը ձգվում է Թեղուտ գյուղի միջով: Մի քանի կիլոմետր երկարությամբ գյուղամիջյան ճանապարհը շատ փոսառատ է, հանդիպակաց ավտոմեքենայի հայտնվելու դեպքում վարորդը ստիպված է մեքենան գցել խոր փոսերի մեջ: Թեղուտի ավտոմոբիլային կամուրջը հիմնանորոգելուց առաջ հարկ էր Թեղուտ գյուղով ձգվող ճանապարհի մեծ փոսերը լցնել ասֆալտով: Կարծես քիչ է, որ գյուղամիջյան այդ ճանապարհը փոսառատ, կիսաքանդ է, գյուղացիները ճանապարհին 5 հատ արհեստական խոչընդոտ՝ «պառկած մելիցա» են սարքել, ինչի հետեւանքով ճանապարհով երթեւեկը գրեթե անտանելի է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞ՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՎԵԴԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Վեդիում լարված իրավիճակ եւ վիճաբանություններ են եղել: Վեդու համայնքապետարանի դիմաց երեկ մարդիկ էին հավաքված եւ բղավում էին միմյանց վրա: «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վեդիի համայնքապետի օգնական Պատվական Մարգարյանի հետ, որը մեզ հետ զրույցում ներկայացրեց մանրամասներ:

-Պարոն Մարգարյան, ի՞նչն է Վեդիում ստեղծված իրավիճակի պատճառը:

-«Արարատ ցեմենտ» գործարանի աշխատակիցներն են Վեդու համայնքապետարանի դիմաց հավաքված: Այսօր մեր մետ հանրային լսումների օր էր: Վեդի համայնքի տարածքում ուզում են նորագույն տեխնոլոգիաներով, փակ ցիկլով նոր ցեմենտի գործարան ստեղծել: «Արարատ ցեմենտ» գործարանի աշխատակիցներն էլ մտավախություն ունեն, որ իրենց հաստիքները կկրճատվեն, գործարանը կսնանկանա: Եկել են, բողոքում են եւ համայնքին խնդրում են, որ համայնքապետարանը նախնական թույլտվություն չտա:

-Համայնքապետարանում ի՞նչ է քննարկվում, թույլտվություն տրվելո՞ւ է, թե՞ ոչ:

-Ներկայացրինք, քննարկում եղավ, հարց ու պատասխան արեցինք, հանրային լսումների առաջին փուլը կայացավ:

-Ի՞նչ որոշվեց:

-Առաջին լսումը թույլտվություն տալուչտալու վերաբերյալ չէր: Դեռեւս պետք է 2 լսում եւս անցկացնենք, եւ դրա արդյունքում կորոշվի թույլտվություն տալ կամ չտալ: Համայնքապետարանը գործարան կառուցել նախատեսող ընկերությանը ներկայացրել է՝ եթե ակնկալում են ստանալ թույլտվություն, պետք է համագործակցեն համայնքապետարանի հետ: Հաջորդիվ նրանք պետք է ներկայացնեն՝ ինչ պահանջներ ունեն, եւ մենք ինչ պահանջներ ունենք:

-Համայնքապետարանը նախնական ի՞նչ որոշում ունի:

-Համայնքապետարանն այս հարցում փոքր օղակ է, կոնկրետ թույլտվություն տվողը համայնքապետարանը չէ: Դեռեւս շատ հարցեր կան, որոնք այս հարցի վերաբերյալ պիտի գտնեն իրեց պատասխանները:

-Գործարանի տնօրինության հետ խորհրդակցություն եղե՞լ է, վերջիվերջո, աղմուկը հենց իրենց պատճառով է բարձրացել:

-Չէ, ինչու՞ մենք պետք է խորհրդակցենք:

-Իրե՞նք պիտի ձեզ հետ խորհրդակցեն:

-Մինչ մեզ Կառավարության, Էկոնոմիկայի, ՏԿԵ, Շրջակա միջավայրի նախարարությունների հետ:

-Համայնքապետարանը խոսե՞լ է նախարարությունների հետ որեւէ որոշման գալուց առաջ:

-Այն ընկերությունը, որը ուզում է հիմնի գործարան, ինքը պիտի դիմի նախարարություններին: Նրանցից ստանալով առաջարկներ եւ պահանջներ՝ ընկերությունը պետք է նրանց ներկայացուցիչների եւ փորձագետների հետ քննարկում ունենա:

-Իսկ տեղյա՞կ եք, նման քննարկումներ եղե՞լ են:

-Եղած կլինեն:

-Համայնքապետարանը Կառավարությունից կամ նախարարություններից հրահանգ ստացե՞լ է այս հարցի վերաբերյալ:

-Իհարկե, մենք առաջնորդվում ենք պետական շահով: Մենք այստեղ աշխատում ենք՝ առաջնային համարելով պետական շահը, նոր մեր անձնական շահը: Պետական շահից ելնելով՝ ես ունեմ իմ անձնական կարծիքը, որ եթե պետք է տարածաշրջանում գործի փակ ցիկլով ցեմենտի արտադրությամբ գործարան, նախընտրելի է, որ գործի, քանի որ մեր պետությանն անհրաժեշտ են միլիոնավոր ներդրումներ եւ աշխատատեղեր: Ասեմ նաեւ, որ գործարանի տերերին չեմ ճանաչում, որ չասեք՝ ճանաչում եմ, դրանից եմ կողմ:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ

ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐ

ՄԱԿ-ի պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունը (ՄԱԿ ՊԳԿ) բարձրացրել է 2023 թվականին հացահատիկի համաշխարհային արտադրության իր կանխատեսումը՝ հասցնելով այդ թիվը մինչեւ 2,819 միլիարդ տոննայի, ինչը 0,9 %-ով բարձր է 2022 թվականի մակարդակից: «Ժողովուրդ» օրաթերթն այդ մասին տեղեկանում է ՄԱԿ ՊԳԿ-ի տարածած հաղորդագրությունից:

Պատճառն այն է, որ Ռուսաստանի Դաշնությունում եւ Ուկրաինայում բերքատվության ավելի մեծ աճ է կանխատեսվում, քան նախկինում: Դա պայմանավորված է բարենպաստ եղանակային պայմանների պահպանմամբ: Դրան հակառակ՝ Կանադայում կանխատեսվում է ավելի վատ բերքատվություն, որը կապված է այդ երկրի հիմնական գյուղատնտեսական շրջաններում երկարատեւ երաշտի հետ:

Ըստ հաղորդագրության՝ աշխարհում հացահատիկի պաշարները 2024 թվականի սեզոնի վերջում կկազմեն 884 միլիոն տոննա, ինչը 3 %-ով կգերազանցի սեզոնի բացման պահի մակարդակը եւ կդառնա ռեկորդային ցուցանիշ:

ՄԱԿ ՊԳԿ-ի հաղորդագրությունում անդրադարձ է կատարվում նաեւ պարենի համաշխարհային գների ինդեքսին, որը սեպտեմբերին չի փոփոխվել: Գների նվազում է դիտվել բուսական յուղի, կաթնամթերքի եւ մսի շուկայում, մինչդեռ շաքարի եւ եգիպտացորենի գները բարձրացել են:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ, չնայած ԵՄ-ի պատժամիջոցների ճնշմանը, Ռուսաստանը ցորենի արտահանման մակարդակը բարձրացրել էր՝ հասցնելով այն մակարդակին, որը կար 2020-ին:

Այս մասին հայտնել էր Bloomberg-ը՝ հղում անելով Եվրամիության աղբյուրներին:

Գործակալության տվյալներով՝ նման ցուցանիշներին վերադարձը հնարավոր է դարձել Ռուսաստանի Դաշնության նկատմամբ բարյացակամ վերաբերմունք ունեցող երկրներից վերաարտահանումների շնորհիվ, օրինակ՝ ԱՊՀ երկրներից ու Չինաստանից:

Ըստ Logistic OS վերլուծական հարթակի՝ Ռուսաստանը մեծացրել է ցորենի մատակարարումները: Դրանք գրեթե կրկնապատկվել են 2023 թվականի հունվարին եւ փետրվարին՝ նախորդ տարվա համեմատ:

Առաքիչներն էլ հաղթահարել են հակառուսական պատժամիջոցների հետեւանքով առաջացած ֆինանսավորման եւ ապահովագրության որոշ խնդիրներ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 25 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 29-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԴՐԱՄՆ ՈՒ ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐԸ

Սկզբում սկսենք նրանից, որ դոլարը տարեսկզբից մինչեւ սեպտեմբեր, կապված համաշխարհային շուկայի փոփոխությունների հետ, պարբերաբար ենթարկվել է փոփոխության:

Կապված նաեւ ռուս-ուկրաինական երկարատեւ պատերազմի հետեւանքների հետ՝ դոլարի փոխարժեքը նվազել էր՝ հասնելով 350 դրամի: 2022 թվականի սեպտեմբերին, երբ Ադրբեջանը կրկին ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ, շուկայում իրավիճակը կրկին նույնն էր:

Դոլարի փոխարժեքն այս անգամ բարձրանալով հասել էր 480 դրամի: Վերջին օրերին եւս դոլարը արժեւորվում է՝ պայմանավորված անվտանգային եւ քաղաքական անորոշությամբ: Տնտեսագետները կարծում են, որ այս իրավիճակը բացասական հետեւանքներ է ունենալու: Հոկտեմբերի 3-ին դոլարը 407 դրամից կտրուկ դարձավ 413 դրամ: Հայ ռուսական հարաբերությունների լարումից հետո կտրուկ աճ նկատվեց նաեւ ռուբլու շրջանում:

Հոկտեմբերի 3-ին արձանագրվեց դոլարի ամենաբարձր շեմը՝ 435 դրամ: Հենց այդ օրը Ազգային Ժողովը վավերացրեց Հռոմի ստատուտը, որից առաջ Հայաստանի հասցեին Ռուսաստանի կողմից սպառնալիքներ էին հնչում զգուշանալու եւ անսպասելիին սպասելու վերաբերյալ:

Թանկացումներ սկսեցին եւ՛ սննդամթերքի շրջանում, եւ՛ վառելիքի: Երկու օր տեւած խառնաշփոթից եւ արտաքին ազդեցություններից հետո դոլարը սկսեց կայունանալ: Տնտեսագետ Սուրեն Պարսյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց, որ դոլարի հետ կապված նման իրավիճակներ եւ եղել նաեւ 44-օրյա պատերազմից հետո, 2022 թվականի սպտեմբերի ռազմական գործողությունների ժամանակ եւ հիմա:

«Երբ Հայաստանի սահմաններին անվտանգային խնդիրը լարվում է, մեզ մոտ դրամի կտրուկ արժեզրկում է գրանցվում: Սա արդեն օրինաչափություն է դարձել Հայաստանի պարագայում: Կենտրոնական բանկը մինչեւ հիմա փորձում էր չմիջամտել, սպասում էր մինչեւ 430 դրամի շեմը հատեր, եւ միջամտեց: ԿԲ-ն դոլար մտցրեց տնտեսության մեջ՝ կայունացնելով դրամի արժեզրկումը»:

Այս իրավիճակի պատճառով շատերը կորցրեցին լուրջ գումարներ, իսկ դոլարային փոխարժեքով վարկ վճարողները կրկնակի տուժեցին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը եւ ԵՄ ճգնաժամային կառավարման հարցերով հանձնակատար Յանեզ Լենարչիչը քննարկել են Արցախից բռնի տեղահանվածների հումանիտար հարցերը: «Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ Հումանիտար կենտրոնում տեղի ունեցած ասուլիսի ժամանակ այս մասին ասաց փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը:

«Հանձնակատարի հետ խոսել ենք այն հիմնական խնդիրների շուրջ, որոնք առաջացել են Ադրբեջանի կողմից շարունակական ուժի կիրառման եւ հայատյաց քաղաքականության իրագործման հետեւանքով: Խոսել ենք տեղահանված եւ Հայաստանում ապաստան գտած ավելի 100 հազար մեր հայրենակիցների հրատապ կարիքների գնահատման, այդ թվում՝ առողջապահական, սոցիալական, հոգեբանական, ֆինանսական հարցերի մասին»,- նշեց Խաչատրյանը:

Փոխվարչապետի խոսքով՝ կառավարությունը բարձր է գնահատում այն արագ արձագանքը, որ ԵՄ-ն եւ նրա անդամ պետությունները շարունակում են ցուցաբերել ԼՂ-ից տեղահանված անձանց առաջնահերթ կարիքների հասցեագրման ուղղությամբ:

«Հանձնակատարի հետ կարեւորել ենք հումանիտար բնույթի լայնածավալ անելիքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրոպական Միության կողմից գործադրվող ջանքերը համաձայնեցնելու, ստացվող հումանիտար աջակցությունը բռնի տեղահանվածների կարիքներին ուղղելու հարցում: Քննարկել ենք համագործակցության միասնական հարթակի ձեւավորման եւ այդ ձեւաչափով մեր գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու հարցերը:

Որպես առաջնային գերակայություն՝ առանձնացրել ենք մեր հայրենակիցների կարճաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ կարիքների գնահատման կարեւորությունը: Դա այն հիմքն է, որը պետք է հնարավոր դարձնի բռնի տեղահանվածների խնդիրների արդյունավետ լուծումը եւ հասանելի հումանիտար օգնությունը ճիշտ օգտագործելու եղանակով արագացնի մեր հայրենակիցներին բնականոն կյանքին վերադարձնելու ընթացքը:

Քննարկման ընթացքում եկել ենք այն համաձայնության, որ Եվրոպական միությունը կշարունակի ավելացված աջակցություն ցուցաբերել բոլոր անհրաժեշտ ուղղություններով՝ հաշվի առնելով այն մեծ փորձառությունը, որն ունի ճգնաժամային կառավարման հարցերում: Համոզվածություն ենք հայտնում, որ ԵՄ-ի կողմից ցուցաբերվող աջակցությունն էապես կնպաստի նրան, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ծրագրերը առավելագույն արդյունավետությամբ լուծեն բռնի տեղահանված մեր հայրենակիցների առաջնահերթ կարիքները»,- եզրափակեց Խաչատրյանը:

Հիշեցնենք, որ վերջին 1 օրվա ընթացքում ԼՂ-ից նոր ժամանածներ չկան, բռնի տեղահանվածների թիվը փոփոխության չի ենթարկվել: Վերջին տվյալների համաձայն՝ Հակարիի կամուրջը հատել է 100 632 անձ: Հաշվառվածների թիվը 99 տոկոս է: Այդ մասին ճեպազրույցի ժամանակ ասաց ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը՝ տեղեկացնելով, որ ժամանածների շուրջ 75 տոկոսը մարզերում է:

Ըստ այդմ՝ Սյունիքում տեղակայվել է ԼՂ-ից բռնի տեղահանված 5444 անձ, Վայոց ձորում՝ 2134, Գեղարքունիքում՝ 5125, Արարատում՝ 18212, Կոտայքում՝ 21593, Արագածոտնում՝ 3967, Արմավիրում՝ 8044, Լոռիում՝ 4107, Շիրակում՝ 3707, Տավուշում՝ 3139, ընդհանուր առմամբ՝ 75472 անձ:

Նշված թվից գերակշիռ մասին՝ 51-52 տոկոսին, պետությունն ապահովել է ժամանակավոր կեցության վայրով, մնացածին տրամադրվել են սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ, դեղորայք:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆ՝ «ՎԱՅԼԴԲԵՐԻԶ»-ԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը տեւական ժամանակ է՝ բնակիչներից բողոքներ է ստանում, որ «Վայլդբերիզ» օնլայն գնումների կայքին կցված իրենց անձնական քարտերից անհասկանալի պատճառներով գումար է գանձվում:

Դիմելով քարտերը սպասարկող բանկեր՝ բաժանորդները փորձել են հասկանալ, թե ինչու են անհասկանալի պատճառներով գումարներ գանձվում, եթե որեւէ պատվեր չեն կատարել: Բողոքների մեծ ալիք կար՝ հատկապես «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի հետ կապված:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի աշխատակիցների հետ՝ հասկանալու համար, թե ինչ հիմունքներով են գումարներ գանձվում բաժանորդներից: Աշխատակիցը պարզաբանեց. ««Վայլդբերիզ» օնլայն գնումների կայքը պարբերաբար թարմացումներ է տալիս, մենք միշտ հորդորում ենք մեր բաժանորդներին անձնական տվյալների տրամադրման հարցում շատ զգույշ լինել, քանի որ մի շարք պատրվակներով կարող են կապ հաստատել՝ նպատակ ունենալով կորզել բանկային քարտի PIN եւ CVV կոդերը»:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Հորդորում ենք լինել զգոն եւ անձնական տվյալներ չտրամադրել երրորդ անձանց, ոչ մի պարագայում անհայտ ծագում ունեցող համակարգերում կամ կայքերում չլրացնել մուտքանուն եւ գաղտնաբառ: Ջեղծարարները WhatsApp, Telegram եւ այլ հարթակներով գնումներ կամ վճարումներ կատարելու, Հայփոստում առաքանի ունենալու եւ մի շարք այլ պատրվակներով կապ են հաստատում կամ կեղծ հաղորդագրությունների միջոցով փորձում են կորզել Ձեր քարտի PIN եւ CVV կոդերը: Նշված տվյալները պետք չէ փոխանցել նույնիսկ բանկի աշխատակից ներկայացած անձանց:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ՝ ՎԱՐԴԵՆԻՍԻՑ

Վարդենիս համայնքի Բանավան թաղամասի 7-րդ շենքից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ ամիսներ առաջ իրենց շենքի տեսիքը քանդել են՝ խոստումով, որ հին «շիֆերները» կփոխարինվեն երկաթյա թիթեղներով, սակայն որեւէ արձագանք չկա, ոչ մեկ ձայն չի հանում, իսկ վերջին հարկում ապրողների բնակարանները «ջրհեղեղի մեջ են»:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վարդենիս համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Մկրտչյանի հետ՝ հասկանալու խնդրի էությունը. «Տեղեկությունը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Շենքի կառուցումն ամբողջովին կառուցապատողի պատասխանատվության տակ է: Նա ունի հստակ ժամկետներ, որոնք չի անցել: Երեկ էլ ինձ զանգել են, ես զրուցել եմ իրենց հետ:

Ինչ վերաբերում է բնակչին, ապա այս պարագայում ինչ վնաս կրում է բնակիչը, դրա ուղիղ պատասխանատուն հենց կառուցապատողն է, բայց մենք բոլոր բնակիչների հետ պայմանավորվել ենք համաձայնություն տալու շուրջ, որովհետեւ հնարավոր են տեղումներ այս սեզոնին, որոնք իրենց հետեւանքներն են ունենալու»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՀԵԼՈՈՒԻՆԸ՝ ԳՈՒՄԱՐ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Ամեն տարի՝ հոկտեմբերի 31-ին, աշխարհի տարբեր երկրներում նշվում է Հելոուինը: Տոնն ի հայտ է եկել Իռլանդիայի եւ Շոտլանդիայի կելտերի հին ավանդույթներից, որի պատմությունը սկսվել է Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի տարածաշրջանում: Տոնը հիմնականում նշվում է անգլախոս երկրներում: Անվանումն առաջացել է հին իռլանդերեն samhain բառից, որը նշանակում է «ամռան ավարտ»:

Շոտլանդիայում Հելոուինի խորհրդանիշը շաղգամն էր, բայց Հյուսիսային Ամերիկայում դրան փոխարինել է դդումը՝ որպես ավելի էժան բանջարեղեն: Առաջին անգամ Ամերիկայում լուսատու դդումների պատրաստումը գրանցվել է 1837 թվականին: Այս օրվա սովորույթներից է քաղցրավենիք խնդրելը: Երեխաները եւ մեծահասակները հագնում են դիմակներ եւ տնից տուն գնում: Ի դեպ, մատնանշելով այս սովորույթը՝ որոշները Հելոուինի եւ Բարեկենդանի միջեւ ընդհանրություններ են տեսնում: Հելոուինն ավանդաբար տոնում են անգլախոս երկրներում, սակայն այն մեծ ոգեւորությամբ նշում են նաեւ այլ երկրներում: Վերջին տարիներին այն նշվում է նաեւ Հայաստանում, թեեւ Հայ առաքելական եկեղեցին օրվա հետ կապված միշտ բացասական բնույթի հայտարարություններով է հանդես գալիս:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանի հետ՝ պարզելու, թե ինչ դիրքորոշում ունի այս առնչությամբ Հայ առաքելական եկեղեցին.

«Հելոուինի տոնը Հայ առաքելական եկեղեցու հետ որեւէ կապ չունի, դա տոն էլ չի կարելի համարել: Ջվարճանքի օր է պարզապես եվրոպական երկրներում, որի ժամանակ, իբրեւ թե, բացվում են դժոխքի դարպասները, դուրս են գալիս չար ոգիները, եւ դու պարտավոր ես, որեւէ չար ոգու կերպարանք ընդունելով, դուրս գաս փողոց...Կարճ ասած, պրիմիտիվ հորինված մի հեքիաթ, որն այսօր Հայաստանում տարածվում է միմիայն այն բանի համար, որի միջոցով հնարավոր է դառնում «բիզնեսներ անել»: Ի՞նչ է սա իրենից ենթադրում: Բազմաթիվ ակումբներ մարդկանց հավաքում են, ասում են՝ այսօր Հելոուին ենք նշում, ու սկսում են մեկը մյուսով գումարներ աշխատել՝ մոռանալով, որ Հայ եկեղեցին նման կիսակախարդական բաներ չի ընդունում, եւ մեր ազգայինի հետ որեւէ կապ չունի: Սա եւս մեկ միջոց է մարդկանց ազգայինից հեռացնելու: Որեւէ եվրոպական երկիր չի տոնում մեր եկեղեցական տոները, այդ դեպքում մենք ինչու՞ ենք մեր վրա պարտավորություն վերցնում անպայման նշելու այդ տոնը: Կարծում եմ՝ մեր ազգը պետք է խորամուխ լինի: Ցանկացած չարի դեմ Հայ եկեղեցին ունի մեկ հզոր բան՝ աղոթք, որը բազմաթիվ անգամներ է իր ուժը ցույց տվել. մարդիկ են բժշկվել, իղձեր են իրականացվել եւ այլն»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՔԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ՎԹԱՐԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

Դերասան Գեւորգ Գրիգորյանը վթարի է ենթարկվել: Այդ մասին Գեւորգը հայտնեց իր ֆեյսբուքյան էջում:

«Քանի Շամշյան չենք ընկել, ես ասեմ՝ բոլորս ողջ ենք», - գրել էր դերասանը:

Չնայած դերասանի հումորային ու սարկաստիկ գրառմանը՝նկարից երեւում է, որ մեքենան ջարդոնի է վերածվել:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ ավտովթարը տեղի է ունեցել Շիրակի մարզ մեկնելու ճանապարհին: Դերասանը ընկերոջ հետ արցախահայությանը օգնություն է ցանկացել տանել: Մեքենան բեռնված է եղել նախատեսվածից շատ, անիվը չի դիմացել, պայթել է, մեքենան էլ, անկառավարելի դառնալով, գլորվել է ճանապարհից ներքեւ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գեւորգը այլ մեքենայով ընկերոջը տեղափոխել է հիվանդանոց, որտեղ ախտորոշել են սալջարդ, կողոսկրի կոտրվածք:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց դերասանի հետ՝ պարզելու, թե ինչպես է հիմա նա. «Ես լավ եմ, ինձ հետ ամեն բան կարգին է: Ընկերս էլ ոտքի վրա է, շնորհակալություն»:

ՄՈԼՈՐԱԿԸ... ԿՈՐԾԱՆԵՑԻՆ

Դերասանուհի, հաղորդավարուհի Նազենի Հովհաննիսյանը սոցիալական ցանցի իր էջերում պարբերաբար կիսվում է հրապարակումներով, որոնցում արտահայտում է իր ցավն ու անհանգստությունը Հայաստանի, Արցախի ու մեր ժողովրդի կյանքում ի հայտ եկած վերջին տարիների դժվարությունների մասին:

Հովհաննիսյանը ինստագրամյան իր էջում կիսվել է լուսանկարով, որում ինքն է՝ Գանձասար վանական համալիրում: Նկարին կից գրում է. «Էքզյուպերին ասում էր. «Առավոտյան հենց որ արթնանաս, լվացվես ու քեզ կարգի բերես, ՊԵՏՔ Է ԱՆՊԱՅՄԱՆ կարգի բերես նաեւ ՔՈ ՄՈԼՈՐԱԿԸ»:

Իմ մոլորակը ... կործանեցին:

Ես փորձում եմ հավաքվել, բայց դեռ ոչինչ չի ստացվում:

Ո՛չ փոքր քայլերի «տեսությունն» է օգնում, ո՛չ էլ գոռալը, ո՛չ լացելը, ոչինչ...

Ինձ կասե՞ք՝ դուք ոնց եք հավաքվում ու ո՞ր մոլորակն եք կարգի բերում... էն որը ...

Իմ մոլորակը վիրավոր է ու շնչակտուր ու շատ մենակ..Ես էլ...

Ու ես չգիտեմ՝ ոնց օգնեմ նրան:

Ոնց օգնեմ ինձ...ուրիշներին...

Գանձասարի ուղեգորգն է: Ինձ հստակ ուղի էր ցույց տալիս՝ դեպի լույսի ու հավատքի Խորան:

Խորանը Ծնունդի խորհուրդ ունի, նոր կյանքի:

Իսկ հիմա չկա... իմ ուղին: Խորանն էլ պղծեցին...

1989թ.-ին՝Վարագա Ս. Խաչի տոնի օրը, Գանձասարում մատուցվեց անդրանիկ Ս. Պատարագը:

ՎԱԹՍՈՒՆԱՄՅԱ ՀԱՐԿԱԴԻՐ լռությունից հետո Արցախում եղավ Պատարագի սրբազան արարողությունը, Գանձասարի զանգերի ղողանջն ավետեց Արցախ աշխարհի հոգեւոր կյանքի վերածնունդը...

Վարագա Սուրբ Խաչի տոնն էր օրեր առաջ...

Քայլերը միշտ են բերում արդյունքի...մտածված քայլերը՝ մտածված արդյունքի, ԱՆՄԻՏ, դավաճանական քայլերը՝ մտածված կործանման...

ԱՆՈՒՂԻ քայլերը՝ մոլորության..

Մեր մոլորակը մոլորվել է. ես էլ հետը:

Սրտիս լույսը վառ եմ փորձում պահել, որ Խաչս սուր մնա, որ ցավը չքթացնի, որ արագ «կյանքը շարունակվում է»- ն նոր խաբեություն չդառնա ու հետո ավելի ուժեղ խոցի:

Ախր...

Ամեն քանդվելուց հետո քարերս մանրվում են, շենքս, տունս, շինությունս խարխլվում է, ես հանուն եմ փնտրում, հանուն, որով պիտի ապրեմ ու տեսնեմ իմ աչքով ՎԵՐԱծնունդը իմ մոլորակի, ու ոչնչացումը թշնամու(ներքին, թե արտաքին):

Կառչում եմ էն մարդկանցից, որ իրար են օգնում, հույս ու հաց են տալիս իրար, քրիստոսավայել ամենաթանկն են տալիս կողքինին....

Բայց ոնց՝ չտեսնեմ Հուդաներին..., որոնք ծիծաղում են հայի գերեվարման լուրի տակ ու մտածված շարունակում ...

Մոլոր-մոլոր պտտվում է մոլորակս՝ կաղալով, վիրավոր ու շիվար:

Սիրտ չունի:

Սիրտը մեր բուժել է պետք, արնահոսող սիրտը...

Արցախի հողը ԴԱՐԵՐՈՎ հայի քրտինքով, սիրով, արյամբ ու պայքարով է ներծծված:

Երիցս անիծված է էն «ազգ»-ն ու անհատը, որը չի հասկանում դա:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆՆ ամբողջապես ծանրանալու է այդպիսիների վրա գերեզմանի տապանաքարի պես:

Ու ես դա տեսնելու եմ..

ԽԱՉԸ ՎԵՐ:

Մոլորակը պետք է սկսենք ՄԱՔՐԵԼ աղտից»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՔԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՄԵԿՆԵՑԻՆ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականը Երեւան-Ստամբուլ-Պոդգորիցա չվերթով մեկնել է Մոնտենեգրո, որտեղ կմասնակցի Եվրոպայի գավաթի խաղարկությանը. այս մասին հայտնում է ֆեդերացիան: Ընտրանին 13 քաշային կարգերից հանդես կգա 12-ում: Հայաստանը կներկայացնեն հետեւյալ մարզիկները՝ 48 կգ Բարեղամ Հարությունյան, 51 կգ Ռուդոլֆ Գարբոյան, 54 կգ Ռուսլան Ասլիկյան, 57 կգ Արթուր Բազեյան, 60 կգ Արթուր Ղազարյան, 63.5 կգ Նարեկ Հովհաննիսյան, 67 կգ Գուրգեն Մադոյան, 71 կգ Ջավեն Գալստյան, 80 կգ Համբարձում Հակոբյան, 92 կգ Նարեկ Մանասյան, 96 կգ Ռաֆայել Հովհաննիսյան, գերծանր քաշային Դավիթ Չալոյան: Հավաքականի գլխավոր մարզիչը Կարեն Աղամալյանն է:

ԿՎԵՐԱԴԱՌՆԱ՞ ԵՎՐՈՊԱ

Ամերիկյան «Ինտեր Մայամիի» եւ աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսին կարող է մի քանի ամսով վերադառնալ Եվրոպա, եթե ամերիկյան թիմը չնվաճի ՄLՍ-ի փլեյ-օֆֆի ուղեգիր. հաղորդում է Inter Miami FC Hub-ը:

ՄLՍ-ի կանոնավոր առաջնությունը կավարտվի հոկտեմբերի 22-ին: Եթե «Ինտեր Մայամին» չկարողանա դուրս գալ փլեյ-օֆֆ, Մեսին իրավունք կունենա կարճատեւ վարձակալությամբ հանդես գալ այլ ակումբում:

ՄLՍ-ի Արեւելյան կոնֆերենցիայում 31 խաղից հետո «Ինտեր Մայամին» 33 միավորով 14-րդ տեղում է: 1/16 եզրափակիչի ուղեգիր ընձեռող 9-րդ տեղում գտնվող «Մոնրեալից» «Ինտեր Մայամին» հետ է 5 միավոր:

ՄLՍ-ի հաջորդ մրցաշրջանը կմեկնարկի 2024թ. մարտին:

Մեսիի պայմանագիրը «Ինտեր Մայամիի» հետ նախատեսված է մինչեւ 2025 թվականը:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» նորեկ, Ֆրանսիայի հավաքականի հարձակվող Մարկուս Տյուրամը պատմել է իտալացի Սիմոնե Ինձագիի գլխավորած թիմում հարմարվելու մասին:

«Ես սիրում եմ թիմային աշխատանք, ակումբակիցներից նոր բան սովորել, եւ ես ստացա այդպիսի հնարավորություն «Ինտերում»: Մենք ունենք շատ միասնական կոլեկտիվ: Այսպիսի մթնոլորտում հեշտ է հարմարվելը: Մենք շատ ժամանակ ենք անցկացնում միասին նաեւ խաղադաշտից դուրս: Դա շատ կարեւոր է ընդհանուր նպատակներին հասնելու համար»,- Տյուրամի խոսքը մեջբերում է Sky Sport Italia-ն:

26-ամյա ֆուտբոլիստն այս ամռանն է Մյոնխենգլադբախի «Բորուսիայից» տեղափոխվել «Ինտեր» ազատ գործակալի կարգավիճակում անվճար:

Գերմանական թիմում անցկացրած չորս մրցաշրջանի ընթացքում Տյուրամը մասնակցել է 134 հանդիպման, խփել է 44 գոլ, կատարել 29 գոլային փոխանցում:

● Հոկտեմբերի 8-ին Երեւանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Գանգսթեր Մաքը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր օբյեկտները ենթակա չեն լիցենզավորման:

Պետրոս Կարապետյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանվել եւ լիցենզավորման ենթակա տեսակների ցանկից հանվել են մի շարք օբյեկտների նկատմամբ լիցենզավորված կազմակերպությունների կողմից շինարարությունն իրականացնելու պահանջը, որոնց նկատմամբ կիրառվում է հսկողություն՝ համարելով դրանք չլիցենզավորված գործունեություն:

Այդ օբյեկտներն են բնակավայրերում կառուցվող 300 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող, մինչեւ երկու վերգետնյա ու մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տները, հաստատված բազմակի օգտագործման օրինակելի նախագծերով կառուցվող օբյեկտները, 150 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող օժանդակ շինությունները եւ 50 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ավտոտնակները, 1000 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող ջերմոցները, 500 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող գյուղատնտեսական արտադրական նշանակության ոչ հիմնական շինությունները եւ 100 քմ ընդհանուր մակերեսը չգերազանցող հասարակական նշանակության ոչ հիմնական շինությունները:

Քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերոնշյալ օբյեկտների շինարարական աշխատանքները պետք է կատարվեն տնտեսական եղանակով՝ առանց լիցենզավորված կապալառուի եւ շինարարության որակի տեխնիկական հսկիչի ներգրավման:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ե՞րբ է կազմակերպվում առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը:

Աիդա Մադոյան (26 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Առկա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները ԵՊՀ-ն դիմորդներին ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը դստեր՝ Մարիամ Փաշինյանի հետ Գրանադայում՝ Կառլոս 5-րդի պալատում, մասնակցել է պաշտոնական ընթրիքի:

Եվրոպական քաղաքական համայնքի երրորդ գագաթնաժողովի բարձրաստիճան հյուրերին դիմավորել են Իսպանիայի թագավոր Ֆիլիպ 6-րդը եւ Լետիսիա թագուհին: Հյուրերին ողջունել է Իսպանիայի վարչապետ Պեդրո Սանչեսը:

Վարչապետ Փաշինյանի աշխատանքային այցն Իսպանիա ավարտվել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+1 +3 +12 +16
Կոտայքի լեռներ	+1 +3 +10 +14
Կոտայքի նախալեռներ	+4 +6 +16 +18
Գեղարքունիք	+1 +3 +10 +14
Լոռի	+4 +6 +14 +17
Տավուշ	+7 +11 +16 +19
Արագածոտնի լեռներ	+1 +4 +7 +11
Արագածոտնի նախալեռներ	+4 +7 +15 +19

Արարատ	+7 +10 +20 +22
Արմավիր	+7 +10 +20 +22
Վայոց ձորի լեռներ	+1 +3 +7 +10
Վայոց ձորի նախալեռներ	+6 +10 +15 +18
Սյունիքի հովիտներ	+10 +12 +16 +19
Սյունիքի նախալեռներ	+10 +12 +15 +19
ԼՂՀ	+7 +10 +17 +20
Երեւան	+10 +12 +17 +19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*